ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5/5.1.2-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2025թ. հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 5.1 կետով նախատեսված «Միջազգային միջոցառումների կազմակերպում» միջոցառման **«Միջազգային կապերի զարգացման նպատակով միջոցառումների կազմակերպում»** 5.1.2 ենթամիջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Լ.Բասմաչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Ա.Ոսկանյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Հաստատվեց՝

Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

«Կավկասուս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրի Հավելված 1-ում «Միջազգային դոնոր կազմակերպությունների հետ առնվազն 1 հանդիպում Երևանում և ՀՀ մարզերում՝ համաձայն սույն Պայմանագրի հավելված 1.1-ի 1-4 կետերով նախատեսված միջոցառումների ապահովում» միջոցառման իրականացման վերջնաժամկետ սահմանվել է 2025 թվականի մայիս-հուլիսը, սակայն հաշվի առնելով, որ Զբոսաշրջության կոմիտեի կողմից նշված ժամանակահատվածում դոնոր կազմակերպությունների հետ չի հաջողվել կազմակերպել միջոցառումը՝ նշված ժամկետներում վերջիններիս անհասանելիության և հիմնական գործընկերների մասնակցության անհնարինության պատճառով, տվյալ ժամկետներում միջոցառման կազմակերպումը հնարավոր չի եղել պատվիրել Ընկերությանը:

Հաշվի առնելով վերոնշյալը, անհրաժեշտություն է առաջացել «Կավկասուս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրի Հավելվածներ 1-ում և 1.1-ում կատարել համապատասխան փոփոխություն՝ հստակեցնելով միջոցառման իրականացման ժամկետները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ Կոմիտեի պատվերով 2025 թվականի սեպտեմբերի 16-ին միջոցառումն արդեն իսկ ապահովվել է Ընկերության կողմից, որին մասնակցել են զբոսաշրջային բաղադրիչ ունեցող բոլոր հիմնական կազմակերպությունները:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. Հնարավոր սեղմ ժամկետում կնքել համապատասխան համաձայնագիր՝ «Կավկասուս» ՍՊԸ-ի հետ 2025 թվականի հունիսի 3-ին կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» N287-25 պայմանագրում համապատասխան լրացում և փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Լ.Բասմաչյան - _____

Ա.Ոսկանյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____